ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » փետրվարի 2025 թվականի N: 50 - Ա ք.Գյումրի

ՄԱՐՏՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՂԱԶԱՆՉԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 84.1-ին հոդվածի 1-ին մասի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ կետի «է» ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի թիվ 62278423 քրեական վարույթով 2025 թվականի հունվարի 7-ի միջնորդագիրը, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երկրորդ վարչության քննիչ Վարդան Մանուկյանի 2025 թվականի հունվարի 7-ի «Քրեական վարույթը կարճելու մասին» որոշումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երկրորդ վարչության քննիչ Վարդան Մանուկյանի 2025 թվականի փետրվարի 21-ի N:18-434կգ-25 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարտուն Խաչատրյանի 2025 թվականի փետրվարի 21-ի գրությունը, նկատի ունենալով որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարտուն Խաչատրյանն իր գործառույթներն իրականացնելիս պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մեկ տոկոսը՝ 303 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2025 թվականի փետրվարի 24-ից դադարեցնել Մարտուն Խաչատրյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունները և լուծել նրա հետ 2021 թվականի փետրվարի 23-ին կնքված N:13 աշխատանքային պայմանագիրը:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝